



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԿՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, հեռ. (0222) 6-10-03, 6-10-04, 6-01-60 էլ. փոստ՝ kunqigyuxapetaran@rambler.ru

06.10.2011 թ. N 109
Ձեր

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ՇԱՀԳԱԼՅԱՆԻՆ

Ձեզ է ներկայացվում Ակունքի համայնքի հաշվետու համայնքային ժողովի արձանագրությունը, որը տեղի է ունեցել 2011թվականի հոկտեմբերի 2-ին:

Չեղարկվեց 3 59:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ. Ռուբենյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ակունքի գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

___02___ . ___10___ 2011թ.

գյուղ Ակունք

2011 թվականի հոկտեմբերի 2-ին-ին տեղի է ունեցել Ակունքի համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝

Համայնքի ավագանու անդամներ

1. Արամյան Բաբկեն
2. Ավագյան Նարինե
3. Մկրտչյան Գոռ
4. Մելքունյան Միհրան
5. Մելքոնյան Ռոբերտ
6. Սամսոնյան Վարդան
7. Տիգրանյան Էդիկ

Համայնքի ղեկավարի աշխատակազմից

1. համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Աբրահամյան
2. աշխատակազմի քարտուղար՝ Մ. Սարիբեկյան
3. առաջատար մասնագետներ՝ Մ. Հակոբյան
4. Հ. Մելքունյան
5. Ա. Ղազարյան

Համայնքի բնակիչներ 68 հոգի

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:
2. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ Համայնքի ղեկավար Հ. Ռուբենյանի հաշվետվությունը 2011թ կատարված աշխատանքների մասին .

1. «Հազարամյակի Մարտահրավերներ» ծրագրի կողմից իրականացված 35 միլիոն արժողությամբ և համայնքի կողմից 4.2 միլիոն համայնքի կողմից ներդրված ոռոգման ջրագծի կառուցում:
2. Մանկապարտեզի շենքի վերանորոգում 30 միլիոն արժողությամբ, համայնքի կողմից նախագծային աշխատանքների պատվիրում 3.4 միլիոն դրամ արժողությամբ, նաև 10 միլիոն դրամ մասնավոր անձանց կողմից ներդրում: Ծրագիրը շարունակական է և նախատեսվում է ավարտին հասցնել 2012 թ. դեկտեմբերի ամսին:
3. Համայնքում կատարվել են հին աղբավայրի հարթեցման և նոր աղբավայրի ճանապարհի ուղղման աշխատանքներ 400.0 դրամ արժողությամբ:
4. կատարվել են կանաչապատման աշխատանքներ 200.0 դրամ արժողությամբ:
5. Լուսավորվել են 4 փողոցները, որը կազմել է 900.0 դրամ, և նախատեսվում է մինչև տարվավերջը իրականացնել արտաքին լուսավորության աշխատանքներ 3 փողոցների համար:
6. Նախատեսվում է մինչև տարվա վերջ կատարել դպրոցի տանիքի վերանորոգման աշխատանքներ:

ԵԼՈՒՅԹՆԵՐ

1. **ավագանու անդամ Ռ. Մելքոնյան** – կատարված աշխատանքները իրոք շատ մեծ նշանակություն ունեն համայնքի սոցյալ տնտեսական զարգացման համար , «Հազարամյակի Մարտահրավերներ» ծրագրի կողմից իրականացված 35 միլիոն նոր ջրագծի կառուցման շնորհիվ ավելացել են ջրօգտագործողների քանակը , մյուս տարի հողի սեփականատերերը կընդարձակեն ջրովի տարածությունները :
2. **ավագանու անդամ Ն. Ավագյան** – համայնքում իրականացված արտաքին լուսավորության շնորհիվ բարելավվել է համայնքի սոցյալ տնտեսական վիճակը ,այն որ նախատեսված է ,որ արտաքին լուսավորություն անցկացնել նաև մյուս փողոցներում գյուղում վերջնականապես կլուծվի փողոցների լուսավորության հարցը :
3. **ուսուցչուհի Ա. Սարգսյան** - մանկապարտեզի շինարարական աշխատանքների կատարման ընթացքը հույս է ներշնչում , որ համայնքի նախադպրոցական տարիքի երեխաները վերջապես կունենան հնարավորություն հաճախել իրենց գյուղի մանկապարտեզը , քանի որ երեխաների ծնողները մեծ ծախսեր են կատարում երեխաներին հարևան գյուղի և Աբովյանի մանկապարտեզներ տեղափոխելու համար :

2.Ընթացիկ հարցեր

- քառամյա ծրագրով 2012թ նախատեսված աշխատանքների մասին`
- մանկապարտեզի շենքի շահագործումը
 - կարգավորիչ ջրամբար մղվող 2-րդ ջրագծի կառուցումը
 - Ամբուլատորիայի կառուցումը: